

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԵՊՍ. ՊՈՂԱՊԱՂՅԱՆԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔՈՒ ԵՎ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

1983 թվականի հոկտեմբերի 23-ին Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում տեղի ունեցան եպիսկոպոսական ձեռնադրություններ: Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսի ձեռքով, սուրբ պատարագի ընթացքում, ի ներկայության բազմաթիվ հավատացյալների, Մայր Աթոռի միաբաններ Տ. Գրիգորիս վարդապետ Բունիաթյանը (Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ), Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանը (Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ) և Տ. Անանիա ծ. վարդապետ Արաբաջյանը (Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ) ստացան եպիսկոպոսական ձեռնադրություն, օծում և աստիճան:

Այնուհետև նորաօծ եպիսկոպոսները Մայր տաճարում և Արարատյան թեմի եկեղեցիներում կատարելով իրենց անդրանիկ ուխտի պատարագները, վերադարձան իրենց թեմերը՝ վերանորոգված եռանդով և սրբական կոչման կատարյալ գիտակցությամբ:

Այս առթիվ Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից գրվեցին սրբատառ կոնդակներ՝ կարդացվելու համար տեղական թեմերում ի լուր հավատացյալ ժողովրդի և ի գիտություն կրոնական գծով տեղական պետական մարմինների, որպես թեմական առաջնորդների ինքնությունը վկայող փաստաթղթեր:

Սույն թվականի նոյեմբերի 4-ին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պողապաղյանը, որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ, պաշտոնական այցով ուղևորվեց Բաքու՝ Ադրբեջանի հավատացյալ հայ ժողովրդին տանելու Հայոց Հայրապետի օրհնություններն ու սրբատառ կոնդակը:

Այս առթիվ գերաշնորհ սրբազան հորն ուղեկցում էր բարեշնորհ Հայկ սրկ. Չիլինգարյանը:

Նոյեմբերի 6-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիսավորությամբ տեղի ունեցավ սուրբ և անմահ պատարագի արարողություն: Թեմի առաջնորդ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը մատուցեց իր անդրանիկ եպիսկոպոսական պատարագը, որին ներկա էին բազմաթիվ հավատացյալներ: Պատարագին ներկա էին նաև Ռուս Պրավոսլավ Եկեղեցուց՝ Տ. Պավլին վարդապետը և Ադրբեջանական ՍՍՀ կրոնական գործերի լիազորի պաշտոնակատար Սիմեոն Լեոնտևիչ Խլեբովոյը: Պատարագի ընթացքում, քարոզից առաջ, «Ուրախ լեր» շարականի հնչյունների տակ, ավանդատնից հանդիսավորապես բերվեց Ամենայն Հայոց կաթողիկու Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը՝ Ադրբեջանի հայոց առաջնորդ Տ. Անանիա սրբազանին եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում տալու մասին: Տ. Ներսես եպիսկոպոսը սուրբ խորանից, ի լուր ժողովրդի, հանդիսավորությամբ ընթերցեց Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը: Այնուհետև իր քարոզում Տ. Ներսես եպիսկոպոսը իր սրտաբուխ ուրախությունը հայտնեց Տ. Անանիա եպիսկոպոսի ձեռնադրության առթիվ՝ Նոր Կտակարանից և Հայ Եկեղեցու պատմությունից բերված վկայություններով վեր հանելով եպիսկոպոսի կոչման և պաշտոնի կարևորությունը: Որպես հովիվ Ադրբեջանի հայոց թեմի, մաղթեց լինել «հովիվ բաջ» և «մշակ առանց ամօթոյ»:

Ապա Տ. Անանիա սրբազանը իր անկեղծ

շնորհակալությունը հայտնեց Տ. Ներսես եպիսկոպոսին նրա եղբայրական հուպիչ խոսքերի համար: Նա սրբազան ուխտ կատարեց հավատացյալ հայ ժողովրդի և Վեհափառ Հայրապետի ներկայացուցչի առջև, լինել հավատարիմ մեր հայրերի ավանդություններին, դավանանքին և առաքելությանը:

Նույն օրը Տ. Ներսես եպիսկոպոսը, ուղեկցությամբ Տ. Անանիա սրբազանի, Տ. Վարդան աբեղայի, բարեշնորհ Հայկ և Ստեփան սարկավագների և եկեղեցական վարչության մի շարք անդամների, այցելեց Բաքվի 26 կոմիսարների հուշահամալիրը: Հայ Եկեղեցու ներկայացուցչին ուղեկցում էր նաև Ադրբեջանի կրոնական գործերի խորհրդի՝ քրիստոնեական Եկեղեցիների գծով բաժնի վարիչը: Տ. Ներսես եպիսկոպոսը և նրան ուղեկցող անձինք Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու և հայ ժողովրդի անունից ծաղկեպսակ կետեղեցին Բաքվում զոհված 26 կոմիսարների հուշարձանին: Ապա կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Իր Բաքու այցելության առթիվ Տ. Ներսես եպիսկոպոսը քաղաքավարական այցելություն տվեց Անդրկովկասի և Ադրբեջանի մահմեդականների կրոնապետ Փաշա-Զադե Ալլահշուքյուր Հումմատ օղլի Շեյխուլ-Իսլամին: Սրբազանին ուղեկցում էր Տ. Անանիա եպիսկոպոսը:

Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին ջերմորեն ընդունեցին Շեյխուլ-Իսլամ Փաշա-Զադեն և արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ Հաջի Սաբիր Ահմեդովը: Ընդունելությանը ներկա էր նաև Ադրբեջանի սյունիի մահմեդականների կրոնապետը:

Նոյեմբերի 5-ին, առավոտյան, Մայր Աթոռի դիվանապետը, ուղեկցությամբ Տ Անանիա եպիսկոպոսի, Տ. Վարդան աբեղայի, բարեշնորհ Հայկ և Ստեփան սարկավագների, եկեղեցական վարչության նախագահ տիկին Ամալյա Բեգլարյանի և պ. Վոլոդյա Հարությունյանի, պաշտոնական այցելություն տվեց Ադրբեջանի կրոնական գործերի խորհուրդ: Այստեղ հյուրերին ընդունեց Ադրբեջանի կրոնական գործերի խորհրդի՝ քրիստոնեական եկեղեցիների գծով բաժնի վարիչ պ. Սիմեոն Լեոնտևիչ Խլեբովոյը, որն իր ուրախությունը հայտնեց ողջունելու Հայ Եկեղեցու, Ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի ներկայացուցչին Ադրբեջանի հողի վրա:

Տ. Ներսես սրբազանը պ. Սիմեոն Լեոնտևիչին փոխանցելով Հայոց Հայրապետի ջերմ ողջույնները, իր գոհունակությունը հայտնեց, որ հայ ժողովրդի կավակները, գտնվելով Հայաստանից հեռու, շրջապատված են բազմաթիվ բարեկամներով և օտարության մեջ չեն զգում իրենց:

Այնուհետև հյուրերն այցելեցին Բաքվի ռուս պրավոսլավ Ս. Բոգորոդիցա (Ս. Աստվածածին) եկեղեցի: Եկեղեցում հյուրերին ջերմորեն ընդունեց և ողջունեց Ռուս Պրավոսլավ Եկեղեցու՝ Բաքվի և Ստավրոպոլի առաջնորդական փոխանորդ Տ. Պավլին վարդապետը, որը հյուրերին ծանոթացրեց իրենց եկեղեցու կյանքին ու գործունեությանը: Նա միաժամանակ իր ուրախությունը հայտնեց Տ. Անանիա սրբազանի ձեռնադրության առթիվ և հույս հայտնեց, որ Հայ Առաքելական և Ռուս Պրավոսլավ Եկեղեցիների միջև հետագա համագործակցությունն ու բարեկամությունը էլ ավելի կամրապնդվեն: Այնուհետև եկեղեցու վանատանը հյուրերի պատվին տրվեց մրգասեղան: Ընդունելությանը ներկա էր նաև պ. Սիմեոն Լեոնտևիչը:

Տ. Ներսես եպս. Պոլապայանի Բաքու այցելության առթիվ «Մոսկվա» հյուրանոցի ճաշասրահում ի պատիվ սրբազան հոր տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որը կազմակերպել էին Տ. Անանիա սրբազանը և Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վարչությունը: Ճաշկերույթին, բացի հայ հոգևորականներից և Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վարչության անդամներից, ներկա էին նաև Ադրբեջանի կրոնական գործերի խորհրդից՝ պ. Էդարը, Ռուս պրավոսլավ Եկեղեցուց՝ Բաքվի և Ստավրոպոլի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Պավլին վարդապետը, Տ. Վիկտոր քահանան, Ս. Բոգորոդիցա ռուսական եկեղեցու վարչության նախագահը և գործադիր մարմնի անդամները: Ճաշկերույթի ընթացքում փոխանակվեցին բաժակաճառեր և եղան բարի մաղթանքներ:

Նոյեմբերի 7-ին Տ. Ներսես եպիսկոպոսը հրաժեշտ տվեց Բաքու քաղաքին և մեկնեց Երևան:

Տ. Ներսես եպիսկոպոսի այցելությունը Բաքու խանդավառություն ստեղծեց Բաքվի հայ գաղութի կյանքում և միջկրոնական հարաբերությունների սերտացման ուղղությամբ ունեցավ իր դրական կարևոր նշանակությունը:

ՀԱՅԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ